Funded by the European Union
Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

ՀՌՉԱԿԱԳԻՐ
ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔՀԿ-ՆԵՐԻ ՑԱՆՑԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով փախստականների իրավունքների պաշտպանության միջազգային իրավական փաստաթղթերը և դրանցով ՀՀ-ի կողմից ստանձնած պարտավորությունները և դրանց բարեխիղճ կատարման կարևորությունը.

Մտահոգված լինելով Հայաստանում իրենց բնակության նոր համայնքներում Արցախից բռնի տեղահանված անձանց աղապտացման և իրավունքների և օրինական շահերի պաշտպանության խնդիրներով.

Համոզված լինելով, որ վերոնշյալ խնդիրների լուծման հարցում լուրջ արդյունքների կարելի է հասնել միայն հասարակության գործուն ներգրավմամբ, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, կառավարության և միջազգային կազմակերպությունների իրական գործընկերության ձևավորմամբ ու զարգացմամբ.

Նպատակ ունենալով դիտարկել Արցախից բռնի տեղահանված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը որպես ռազմավարական նշանակության հիմնահարց և ակտիվ մասնակցություն ունենալ այդ հիմնահարցի կարգավորման գործում.

Սույն Հռչակագրին մասնակից քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ-ներ) ազդարարում են Արցախից բռնի տեղահանված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակին ուղղված համատեղ գործունեության և գործընկերության մասին՝ հռչակելով Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության ՔՀԿ-ների ցանցի հիմնադրումը:

Արցախից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության ՔՀԿ-ների ցանցի նպատակներն են.

ա) Նպաստել Արցախից տեղահանվածների ադապտացմանը Հայաստանում,

բ) Ուժեղացնել Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության մեխանիզմները, բարձրացնել նրանց արդարադատության հասանելիության, իրավունքների իրավական իրազեկության ու խնդիրների բարձրաձայնման մակարդակը:

գ) Զարգացնել Ցանցի անդամ կազմակերպությունների արցախահայերի իրավունքների պաշտպանության և այլ կարողությունների ուժեղացման իրականացման հետ կապված:

Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության ՔՀԿ-ների ցանցը ոչ ֆորմալ կառույց է, որը իր աշխատանքները կազմակերպում է անդամ կազմակերպությունների համաժողովի կողմից հաստատված կանոնակարգի միջոցով:

Սույն Հռչակագիրը ի պահ է հանձնվում Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության ՔՀԿ-ների ցանցի քարտուղարությանը՝ Իրավաբանների հայկական ասոցիացիային:

Հռչակագիրը բաց է արցախահայերի իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար:

12.03.2024թ.